

Ժողովուրդ

18
(2684)

8 փետրվարի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

✉ ք. Երևան, Արվյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԱՆԵՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԵՄԵԼԸ



Երեկ 33 գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը խորհրդարանում ներկայացրեց իր Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ միջնորդագիրը: Քննարկման ժամանակ, կանա, թե սկսված, Աննա Վարդապետյանը խոստովանեց, որ Սեյրան Օհանյանի մասով այս քրեական հետապնդումը հարուցվել է նաև այն պատճառով, որ վերջինս չի միջնորդել վաղեմության հիմքով գործը կարճելու համար: Մասնավորապես, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Յուրի Աղազարյանը, հարց ուղղելով գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին, հետաքրքրվեց. «Եթե Սեյրան Օհանյանը ներկայանար Ձեզ կամ մարմին համապատասխան եւ ընդուներ իր մեղքը, ենթադրենք՝ խնդրեր վաղեմության ժամկետ կիրառել, ի՞նչ տեղի կունենար»: «Մենք վաղեմության ժամկետի կիրառման հիմքով իր նկատմամբ, բնականաբար, քրեական հետապնդում չէինք հարուցի, բայց քննությունը կշարունակեինք՝ արդեն այս փաստն ունենալով մեր գործի նյութերում այլ անձանց վերաբերյալ, որովհետև այստեղ մի անձ չէ, միայն Սեյրան Օհանյանը չէ», -ասաց գլխավոր դատախազը: Այսինքն՝ նա խոստովանեց, որ Սեյրան Օհանյանի ետեւից եկել են խորհրդարան միայն այն պատճառով, որ վերջինս չի խնդրել վաղեմության ժամկետ կիրառել: Ընդ որում այս հարցն ու ձեռակերպումը հնչեց տարբեր կերպ եւ ամբողջ քննարկման ժամանակ: Ուշագրավ մտքեր հնչեցին նաեւ ԶԳ-ական պատգամավորների կողմից: Օրինակ՝ Նախկին 334-ական, այժմ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գեորգ Պապոյանը ելույթ ունենալիս նշեց. «Պատկերացնում եք, որ որոշակի վարձու լրագրողներ, գրչակներ, խմբագիրներ ինչպիսի ոռնոց կբարձրացնեին, եթե հանկարծ պարզվեր, որ զորամաս է փակվում Հայաստանում կամ վաճառվում»: Այստեղ թերեւս պետք է հիշեցնել, որ նախորդ տարի՝ 2022թ. ապրիլի 15-ին, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, չգեկուցվող հարցերից մեկով վաճառքի հանվեց Երևանում եւ մարզերում Պաշտպանության Նախարարությանը պատկանող 72 անշարժ գույք, այդ թվում՝ Պաշտպանության Նախարարության Նախկին շենքը, գործարաններ, հողատարածքներ: Ընդ որում՝ հետպատերազմական ծանր իրավիճակում գտնվող Հայաստանը որոշել էր ՊՆ-ին ամրացված ռազմական գույքեր վաճառել նաեւ Ադրբեյջանի հետ սահմաններ ունեցող մարզերում: Մասնավորապես, վաճառքի հանված երկու զորամաս գտնվում էր Գեղարքունիքի մարզում: Երեկ, սակայն, Սեյրան Օհանյանին մեղադրում էին, թե նրա օրոք վաճառվել է Նախիջեանի սահմանին գտնվող զորամասը: Նկատենք՝ 33 գլխավոր դատախազն իր խոսքում նշել էր, որ Սեյրան Օհանյանի օրոք վաճառված ՊՆ տարածքը գործող զորամաս չի եղել, եւ ավելին՝ պիտանի զորամաս չի եղել, սակայն սա էլ չի խանգարել, որ Օհանյանի հարցով Վարդապետյանը ԱԺ մտնի:

ԶԳ-ականները երեկ՝ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին ճանապարհելուց հետո, «խնջույք» են կազմակերպել ԱԺ-ում: ԶԳ-ականների բարձր տրամադրությունից սկզբում տպավորություն է ստեղծվել, թե նրանց շատ է ոգետրել Աննա Վարդապետյանի ելույթը՝ Սեյրան Օհանյանին անձեռնմխելույթից զրկելու մասով: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, սակայն, որ ԶԳ-ականները Վարդապետյանին ճանապարհելուց հետո՝ մինչեւ Սուրեն Պապիկյանին դռնփակ նիստում դիմավորելը, պատգամավորներից մեկի աշխատասենյակում վերջինիս ծնունդն են նշել: Տեղեկացանք, որ ԶԳ-ականները հավաքվել են ֆուրջետի սեղանի շուրջ ու մի լավ ուրախացել: Պապիկյանի՝ ԱԺ գալուստի պես, սակայն, ԶԳ-ականները դադարեցրել են իրենց քեֆ-ուրախությունը եւ շտապել են Նախարարի հետ փակ հանդիպման: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԶԳ-ականները Պապիկյանի հետ հանդիպմանը եւ շտապ բարձր տրամադրություն են ունեցել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն այս շաբաթ որոշումներ է կայացնելու Ազգային ժողովի ԶԳ-ական, ինչպես նաեւ «Հայաստան» խմբակցության մի քանի պատգամավորների նկատմամբ՝ «անհամատեղելիության պահանջի առերեսությամբ խախտման» հիմքով հարուցված վարույթներով: Ի դեպ, գրել էինք, որ պատգամավորները ստացել էին հանձնաժողովի ծանուցումները, որ իրենց դեմ վարույթ կա: Հայաստանի Հանրապետությունում պատգամավորի մանդատի հետ անհամատեղելիության պահանջը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը սահմանված է 33 Սահմանադրությամբ: Ստացվում է, որ հանձնաժողովը պատգամավորների գործունեության մասով խախտում է գտել (նրանք նաեւ թիզնե գործունեությամբ են զբաղվում), ինչը անհամատեղելի է: Իսկ ովքեր են այն պատգամավորները, որոնց նկատմամբ հանձնաժողովը վարույթ է հարուցել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ վարույթ է հարուցվել ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Նազարյանի, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի եւ եւս մի քանի ԶԳ-ականների մասով: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում դեռեւս անցած տարի Գեղամ Նազարյանը հաստատել էր, որ ծանուցում ստացել է հանձնաժողովի կողմից՝ իր նկատմամբ հարուցված վարույթի մասով, եւ նշեց, որ դա թյուրիմացություն է եղել. ինքը կզնա վարույթի մասով նշանակված նիստին եւ կպարզաբանի ամեն ինչ: Խաչատուր Սուքիասյանի մամուլի քարտուղար Աննա Մկրտչյանն էլ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնել էր, որ ծանուցումը ստացել են, եւ տեղի ունեցածը իրենց համար թյուրիմացության հետեանք է, ինչով այս պահին զբաղվում են իրավաբանները: Պետք է շտկվի խնդիրը: Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 107 պատգամավորների հայտարարագրերը ուսումնասիրվում են, եւ չի բացառվում, որ ցանկը այսքանով չավարտվի, այլ պատգամավորների մասով եւս խախտումներ հայտնաբերվեն:

Հայաստանում գործող տուրքակերպությունները լուրջ խնդիրներ են առաջացրել քաղաքացիների համար: Խոսքը դեպքերի մասին է, որը, քաղաքացիների համոզմամբ, վերածվել է շահութաբեր առետրի: Օրինակ՝ եթե ցանկանում ես վիզա ստանալու նպատակով մտնել որեւէ դեսպանատուն եւ օր չունես ամրագրած, ապա հոգ չէ. կան տուրքայեռատրոներ, որոնք նախապես ամրագրած օրերը կարող են վաճառել՝ 15000 դրամից մինչեւ 50000 դրամով: Այս թեմայի շուրջ ահազանգեր «Ժողովուրդ» օրաթերթին արդեն մի քանի ամիս է, ինչ ստանում է: Նրանց պատմելով՝ հայտնի է, որ տուրքակերպության աշխատողները դեսպանատներում օրեր ամրագրում են գիշերվա ժամերին, վարկյանների ընթացքում: Զի բացառվում, որ որոշ տուրքակերպություններ դեսպանատների հետ ներքին պայմանավորվածություն ունեն եւ նախապես զգուշացվում են, թե որ օրը որ ժամին է ազատ տեղ բացվելու: Այս ծառայությունը նրանք չեն ձեռակերպում որպես վաճառք, այլ նշում են, որ թարգմանություններ են արել, քաղաքացու փոխարեն փաստաթղթեր են լրացրել: Ուշագրավն այն է, որ որեւէ պետական կառույցի կողմից այս գործընթացը չի վերահսկվում: 33 արտաքին գործերի նախարարությունում գուցե տեղյակ են, բայց լռում են՝ անգործություն դրսևորելով: Իսկ Զբոսաշրջության պետական կոմիտեից տեղեկացնում են, որ ապացույցներ չունեն, որ տուրքակերպություններն «օրեր են վաճառում»: Մյուս կողմից՝ Նույն կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցում են, որ իրենք եւս այս խնդրի շուրջ բազմաթիվ բողոքներ են ստացել քաղաքացիներից, որոնք անմիջապես փոխանցել են Արտաքին գործերի նախարարություն, սակայն անարդյունք: պետական այս կառույցից զբոսաշրջության կոմիտեն դեռեւս արձագանք չի ստացել: Գուցե իրավապահ մարմինը սկսի ուսումնասիրել խարդախանքների այս պտույտը:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԱԿՆԿԱԼ

ԿՐԱՅՏԱՐԱՐԵՆՔ ԱՆՍՊԱՍԵԼԻ ԴԱՇԻՆՔԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում եւ Արցախում ստեղծված իրավիճակի, Հայաստանի ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ ArmLur.am-ը գրուցել է «Ալյանս» կուսակցության նախագահ, Ազգային ժողովի նախկին դասգամավոր Տիգրան Ուրիխանյանի հետ: Մեզ հետ գրուցում վերջինս հայցնեց, որ իր կուսակցությունը մասնակցելու է քաղաքական ընտրություններին: «Ալյանս»-ը մայրաքաղաքային ընտրություններին մասնակցելու է դաշինքով, իսկ թե որ քաղաքական ուժի հետ, Տիգրան Ուրիխանյանը դեռ չի ցանկանում փակագծեր բացել, բայց խոստանում է, որ դաշինքը լինելու է աստեղի համար անադատելի եւ հեռախոսով:



-Պարոն Ուրիխանյան, հայտարարել եք, որ ձեր կուսակցությունը մասնակցելու է քաղաքացիական ընտրություններին. ինչ ձեռնարկով է լինելու մասնակցությունը, ո՞ր է թեկնածուն լինելու:

-Ամենայն հավանականությամբ, ձեռնարկով է մի շատ յուրահատուկ ու հզոր դաշինք՝ գրեթե բոլորի համար անսպասելի. կարծում եմ՝ նաեւ լիարժեք հաղթանակի հավանական դաշինք է լինելու: Իսկ թե ով է լինելու թեկնածուն, այդ ժամանակ էլ կհայտարարվի:

-Ո՞ր քաղաքական ուժի հետ եք դաշինք կազմելու:

-Մի քանի օրից կուսակցության եւ վարչության նիստ ենք ունենալու, քննարկումներ ենք ունենալու մեր գործընկերների հետ, որից հետո կհայտարարվի սպասվող նոր դաշինքի մասին: Ասում են՝ արհեստականորեն շաբաթը ուրբաթից շուտ է գալիս, այսինքն՝ մայրաքաղաքային ընտրությունները կարող են անցկացվել արտահերթ եւ շատ ավելի վաղ, քան սպասվում է, ուստի կհայտարարենք անակնկալ ու հետաքրքիր դաշինքի մասին:

-Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի ու Արցախի շուրջ ստեղծված անվտանգային իրավիճակը:

-Բազմից խոսել եմ այս մասին եւ՝ Ազգային ժողովում նախկին երկու գումարումների ընթացքում, այս իշխանության գոյության ընթացքում, եւ՝ խորհրդարանից դուրս: Կործանարար է այս իշխանության վարած քաղաքականությունը. Արցախն արդեն կործանել են, կփրկի միայն հրաշքը, իսկ Հայաստանը մոտեցել է եզրագծին, փրկությունը հրատապ իշխանափոխությունն է:

-Իշխանության քայլերը Արցախում ստեղծված ճգնաժամը լուծելու ուղղությամբ բավարար գնահատում եք: Եթե դուք լինեիք իշխանության, ինչպե՞ս կվարվեիք:

-Իշխանության քայլերի բավարար լինելու մասին խոսելը, կարծում եմ, նույնիսկ տեղին չէ. իշխանության քայլերը բավարար են միայն իրենց մանկահասակ մակարդակի չտեսությունը բավարարելու համար, լավ, ճիշտ-ճիշտ առանձնատներ, մեքենաներ ու բիզնեսներ գնելու համար: Իսկ թե ինչպես կվարվեի, եթե իշխանության լինեի, չեմ կարող ասել, քանզի վաղուց արդեն որեւէ նպատակ եւ ցանկություն չունեմ իշխանության գալու:

-Այս ընթացքում փորձե՞լ եք հանդիպել Փաշինյանի հետ, քննարկել ստեղծված իրավիճակը:

-Եթե Փաշինյանի հետ հանդիպելու ցանկություն լինեի, կմնայի արտախորհրդարանական կոչված կուսակցությունների կազմում եւ քննարկումների կմասնակցեի: Իսկ Փաշինյանի հետ քննարկելու մի բան կա՝ քանի թույլ եւ հրաժարական տալու. ուրիշ քննարկելու բան չկա, սրանով ամեն ինչ ասված է: Բոլոր ջանքերս ու հնարավորություններս, ռեսուրսներս, իմ կուսակցության աշխատանքները ուղղված են լինելու գործող իշխանության փոփոխությանը եւ նրանց իշխանությունը բերածներին քաղաքականությունից դուրս շարտելուն:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿԵՆԹՐԱԿԵՆ

ՊԱՏԱՄԻԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

Չնայած Ազգային ժողովի նստաշրջանը մեկնարկել է, եւ օրակարգում 20-ից ավելի հարց է ընդգրկված, սակայն բոլորի ուշադրությունն այն միջնորդություններն են, որ խորհրդարանում արդեն ներկայացրել եւ պետք է ներկայացնի ՀՀ գլխավոր դատախազը պատգամավորներ Սեյրան Օհանյանի եւ Արմեն Չարչյանի մասով: Աժ օրակարգում կան այլ հարցեր եւս, որոնք կարելի էր քննարկել ներկայացնում: Դրանցից մեկով Երեւանի քաղաքապետարանն ու Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունն առաջարկում են փոփոխություններ կատարել «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես՝ այսուհետ Երեւանի ավագանին ունենալու է նոր գործառնություն եւ կարողանալու է սահմանել բացօթյա վայրերում (փողոց, մայր, հրապարակ, այգի, պուրակ եւ այլն) մշակութային գործունեության իրականացման կարգը: Հիմնավորման մեջ նշվում է, որ հանրային վայրերում (բացօթյա վայրերում) իրականացվող ստեղծագործական, մշակութային գործունեությունը կարող է լուրջ անհարմարություններ պատճառել այլ քաղաքացիներին: Եվ, ահա, Երեւանի ավագանու կողմից կարգը սահմանելուց զատ, նաեւ փոփոխություններ են կատարվելու «Վարչական իրավախախտումների մասին» օրենքում: Ըստ այդմ՝ մշակութային գործունեության իրականացման նպատակով հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայր, հրապարակ, այգի, պուրակ եւ այլն) օգտագործման պայմանները, պահանջները եւ սահմանափակումները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով: Արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչեւ ութհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող այն առարկաների բռնագրավմամբ, որոնք հիշյալ խախտումները կատարելու գործիք են համարվել, կամ առանց դրանք բռնագրավման: Սա նշանակում է, որ որեւէ հանրահավաք գույք քաղաքային իշխանության սրտով չլինի, եւ վերջինս տուգանքի կազմակերպիչներին:

ԳԱՂՏԱԳՈՒԴ ՏԱՐԱՆ

Մշտապես թափանցիկությունից խոսող եւ դրանով հպարտացող իշխանության ներկայացուցիչներն իրենց սրտի գլխավոր դատախազին (որն արդեն բաց չի թողնում զեկուցել իր գործերը վարչապետին) լրագրողներից թաքուն են պահում: Բանն այն է, որ երբ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը խորհրդարանում զեկուցում էր Աժ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին հարցը: Նրան խորհրդարան բերեցին եւ ապա դուրս հանեցին Աժ նախագահի համար նախատեսված մուտքով, այսինքն՝ լրագրողների համար անհասանելի տարածքով: Ընդգծելով, որ խորհրդարանում երկար տարիներ, նաեւ հեղափոխությունից հետո ավանդույթ է, որ նման դեպքերում պաշտոնյաներին ուղեկցում են գլխամասային հանձնաժողովների նախագահները, այսինքն՝ այս դեպքում Վարդապետյանին պետք է ուղեկցեր Աժ պետաիրավական հարցերով հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը: Այս անգամ դատախազը որոշել է հեռու մնալ լրագրողաշատ միջանցքից: Ընդգծելով՝ այս ավանդույթը եղել է նաեւ նախկին գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի դեպքում, երբ վերջինս եկել էր խորհրդարան նման միջնորդություններով կամ տարեկան զեկուցներով: Նրան հետց Վարդանյանն էր ուղեկցում, իսկ նիստերից հետո էլ նա սովորություն ուներ ճեպագրույց տալ լրագրողներին: Փաստորեն, թափանցիկությունից խոսող իշխանությունում իրավիճակ է փոխվել:

ԼՈՒՐԵՐ

ԻՐԵՒԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՈՌԷ Է ԱՆՈՒՄ

«Ջավեշտալի է. նույն այս իշխանությունը կառավարության նիստում օտարման էր ներկայացրել 71 ռազմական օբյեկտ, որը ՊՆ-ի բալանսում էր, հիմա էլ Սեյրան Օհանյանին են մեղադրում»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ գրուցում ասել է «Պատիվ ունեն» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը՝ անդրադառնալով Սեյրան Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու դատախազության միջնորդությանը: «Սա բացահայտ ցույց է տալիս, որ այս իշխանությունների համար քննարկման առարկան ոչ թե բուն իրավական գործընթացներն են կամ առաջացած խնդիրները, այլ իշխանությունը փորձում է հերթական անգամ խորհրդարանում շոու իրականացնել»,- ասաց Աբրահամյանը: Պատգա-

մավորի համոզմամբ՝ ընդդիմադիրների նկատմամբ իրականացվող այս գործընթացը Զինված ուժերում արձանագրված ողբերգությունները եւ տապալումները որեւէ ձեւով «մասկիրովկա» անելու եւ սկսելը այլ ուղղությամբ տանելու համար են: «Չկա բովանդակություն, չկա հիմք. քաղաքական մոտիվներ ձեռնդրող գործընթաց է, որին որոշել են իրավական փնթի ձեւակերպումներ տալ»,- ասաց նա:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԵՆ ՊԱՐԱՆՁՈՒՄ

Երեկ Ազգային ժողովի Դեմիրճյան մուտքի դիմաց էին գտնվում բանակում տարբեր տարիներին խաղաղ պայմաններում զոհված զինծառայողների ծնողները՝ սեւագգեստ մայրերը: ArmLur.am-ի թղթակիցը հայտնում է, որ նրանք հանդի-

պում են պահանջում ինչպես ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի, այնպես էլ Աժ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ: Աժ նախագահի օգնականը ծնողներին խոստացավ, որ վաղը Ալեն Սիմոնյանը կհանդիպի նրանց, իսկ դատախազ Աննա Վարդապետյանի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանն այստեղ էր, սակայն ծնողների հետ չխոսեց: Ծնողները գայրացած են, ասում են, որ Աննա Վարդապետյանը պետք է գա, պատասխան տա, քանի որ դատախազ ընտրվելիս նա իր ելույթում նշել էր, թե այս գործերի բացահայտումը դժվար չէ: Եվ հիմա ծնողները բացատրություն են պահանջում, թե ինչու մինչեւ այժմ գործերը չեն բացահայտվել:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Ալեն Սիմոնյանը այսօր Աժ-ում կընդունի զոհվածների ծնողներին եւ կլիսի նրանց: Դատախազ Աննա Վարդապետյանը դեռեւս չի արձագանքել ծնողներին:

ԿՈՉ

ՊԱՏԱՄԻԱՆԵԼ Է ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Կոչ եմ արել Ադրբեջանին եւ Ռուսաստանին անհաղաղ վերականգնել անխոչընդոտ սահմանումը՝ նախկին հանձնառություններին համադաստիսան»,- ԵԱՀԿ-ում ԱՄՆ դեսպան Մայլ Բարփենթերը դասասխանել է Բերձորի միջանցքի շուրջ ձեռագրված իրավիճակի վերաբերյալ իմ գրություններին»,- հայտարարություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների դաշտայնության եւ հանրային հարցերի մեծական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թազուհի Թովմայանը:



Արցախի ելեկտրաէներգիայի մատակարարումը:

- «ԵԱՀԿ-ում ԱՄՆ դեսպան Մայլ Բարփենթերին ուղղված բազմաթիվ նամակներով ահազանգել էի Արցախում հումանիտար արտակարգ իրավիճակի, Ադրբեջանի կողմից շրջափակված 120.000 բնակչության կենսական խնդիրների վերաբերյալ:
- Դեսպանին ներկայացրել էի Ադրբեջանի կողմից ստեղծված հավելյալ խնդիրներն առ այն, որ վերջինիս ապակառուցողական վարքագծի հետեւանքով հնարավոր չէ մտնել Ադալտ-Բերձոր հատվածում տեղի ունեցած միջադեպի վայր եւ իրականացնել էլեկտրաէներգիայի մատակարարման վերականգնողական աշխատանքներ, ուստի Արցախի էլեկտրաէներգիայի մատակարարման լրջագույն խնդիրներ են առաջացել ցուրտ ձմռան պայմաններում:
- Դեսպան Բարփենթերին տեղեկացրել էի նաեւ Արցախ տեղափոխվող 19 հայ երեխաների նկատմամբ Ադրբեջանի գործադրած էմոցիոնալ եւ հոգեբանական բռնության վերաբերյալ եւ հիմնավորել ադրբեջանցիների հանցավոր գործողություններում «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի հիմնարար դրույթների խախտման փաստերի առկայությունը:
- Պրն Բարփենթերին խնդրել էի՝ իր մանդատի/իրավաստությունների շրջանակում ձեռնարկել կոնկրետ քայլեր՝ սահմանելու պատժամիջոցներ Ադրբեջանի քաղաքական ղեկավարության նկատմամբ, որը տվել է իրաման ներխուժելու Արցախ տեղափոխվող երեխաների ավտոբուս եւ նրանց նկատմամբ իրականացնելու հոգեբանական տեռոր,
- ձեռնարկել բոլոր հնարավոր քայլերը՝ ապահովելու հայկական կողմի մուտքը Ադալտ-Բերձոր հատված՝ վերականգնելու

լու Արցախի էլեկտրաէներգիայի մատակարարումը:
Դեսպան Բարփենթերը պատասխան գրությամբ շնորհակալություն է հայտնում իմ նամակների համար, որոնցում մտահոգություններ եմ բարձրաձայնել՝ Բերձորի միջանցքի հետ կապված եւ Արցախի Հանրապետությունում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ:
«Հավաստիացած եղեք, որ Միացյալ Նահանգները իր դիտարկման ներքո է պահում հարցը ինչպես Վաշինգտոնում, այնպես էլ Բաքվում եւ Երեւանում իր դեսպանությունների միջոցով, եւ ես անձամբ ուշադրությամբ հետեւում եմ զարգացումներին: ...Կոչ եմ արել Ադրբեջա-

նին եւ Ռուսաստանին վերականգնել անխոչընդոտ տարանցումը՝ նախկին հանձնառություններին համապատասխան»,- նշում է դեսպանը:
Դեսպանը հավելում է, որ իրենք կշարունակեն աշխատել Հայաստանի եւ Ադրբեջանի հետ ինչպես երկկողմ ձեռագրված, այնպես էլ բազմակողմ ձեռագրված այնպիսի գործընկերների միջոցով, ինչպիսին ԵՄ-ն է, եւ միջազգային կազմակերպությունների միջոցով, ինչպիսին ԵԱՀԿ-ն է՝ հասնելու այս հակամարտության համապարփակ եւ հաստատուն կարգավորման, որը շարունակվել է չափազանց երկար եւ խել չափազանց շատ կյանքեր»:

ԲԱՑԱԿԱՆ ԿՐԱՄԱՐՎԻ ՀԱՐԳԵԼԻ

Որեւէ հիվանդության պատճառով 2-3 անգամ բացակայած սաները դուրս չեն մնա նախադպրոցական հաստատությունից: ArmLur.am-ը տեղեկացավ, որ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N 76-Ն հրամանում լրացում է կատարվելու:

Բանն այն է, որ ԿԳՄՍ-ն 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում նախադպրոցական ուսումնական հաստատությունների սաների բացակայությունների պատճառների վերլուծության արդյունքում պարզել է, որ հատկապես աշնանային եւ ձմեռային ամիսներին երեխաների բացակայությունները մեծ մասամբ պայմանավորված են սուր շնչառական վարակների տարածմամբ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախատեսվում է երեխայի հսկողությունն իրականացնող առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպության կողմից տրված՝ սահմանված ձեւի փաստաթղթի հիման վրա՝ հիվանդության պատճառով չհաճախած օրերի բացակայությունը համարել հարգելի, բայց ոչ ավելի, քան տվյալ ուսումնական տարվա ընթացքում 21 օր:

Այսինքն՝ 2-3 անգամ որեւէ հիվանդության պատճառով բացակայած սաները դուրս չեն մնա հաստատությունից, ինչպես գործող կարգի դեպքում է տեղի ունենում, այլ հիմնավոր փաստի առկայությամբ սանը կշարունակի ներգրավված մնալ նախադպրոցական կրթության մեջ:

Նշենք, որ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2021 թվականի հոկտեմբերի 11-ի N 76-Ն հրամանի 22-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված է, որ նախադպրոցական ուսումնական հաստատության սանի ազատումը հաստատությունից կատարվում է ուսումնական տարվա ընթացքում սանի, անկախ պատճառից, 75 աշխատանքային օր բացակայելու դեպքում:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ, վարչապետի որոշմամբ, ՍՍՍՄ-ն նոր դեկավար ունի:

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով եւ «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Արմեն Հայրապետյանին նշանակել ՍՆՆԴամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար:

Նշենք, որ Արմեն Հայրապետյանը ֆինանսների նախկին փոխնախարարն է:

Հիշեցնենք, որ Գեորգի Ավետիսյանը օրեր առաջ էր ազատվել ՍՍՍՄ ղեկավարի պաշտոնից:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը փետրվարի 7-ին ընդունել է Խորվաթիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Գորդան Գրլիչ Ռադմանին: Հանդիպմանը քննարկվել է երկկողմ հարաբերություններին միտված բազմալորտ համագործակցության անհրաժեշտությունը: Ալեն Սիմոնյանը, նշելով, որ Խորվաթիայի խորհրդարանի խոսնակի մակարդակով ընդամենը մեկ այց է եղել (2011 թվականին), առաջարկել է ակտիվացնել միջխորհրդարանական հարաբերությունները:

Անդրադարձ է եղել բարեկամ երկրների խորհրդարանների միջեւ ակտիվ երկխոսության հարցում բարեկամական խմբերի դերին:

Հանդիպման ավարտին գրույց է ծավալվել միջազգային հարթակներում գործակցության հնարավորությունների շուրջ: Քննարկվել են կրթության, գիտության,

առևտրի եւ զբոսաշրջության ոլորտներում փոխշահավետ համագործակցության հեռանկարները: «Կարծում եմ ուղիղ թռիչքների գործարկումը կնպաստի երկու ուղղություններով զբոսաշրջության զարգացմանը»,- նկատել է Ալեն Սիմոնյանը:

ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Միսայանի հրամանով՝ Արթուր Հարությունյանն ազատվել է գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի պաշտոնից:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասով, ինչպես նաեւ հիմք ընդունելով գլխավոր հարկադիր կատարող Ա. Մնացականյանի՝ 2023 թվականի փետրվարի 6-ի թիվ 01/08.1/4704-2023 գրությամբ ներկա-

յացված առաջարկությունը եւ Ա. Հարությունյանի դիմումը՝

Արթուր Լեւիկի Հարությունյանին 2023 թվականի փետրվարի 7-ից ազատել գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի պաշտոնից»,- ասված է նախարարի հրամանում:

ՓՐԿԱՐԱՐՆԵՐ ԿՈՒՂԱՐԿՎԵՆ

Հայաստանը պատրաստվում է փրկարարներ ուղարկել Թուրքիա՝ երկրաշարժի հետեւանքների վերացման աշխատանքներին օգնելու նպատակով:

Ինչպես վարչապետն իր սոցիալական կայքում գրել է, Հայաստանը պատրաստ է համապատասխան օգնություն տրամադրել Թուրքիային եւ Սիրիային: Այս ուղղությամբ այժմ կազմակերպչական աշխատանքներ են ընթանում:

ԻՆՉ Է ՊԱՐԶՎԵԼ

ԱՐՄԵՆՅԱՆԻ ՈՐԴՈՒ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

Հունվարի 29-ին հրապարակվել էր մամուլում Տեղեկություններ են ցրանառվում, որ դեկտեմբերի 27-ին սառը զենք կրելու հիմնավոր կասկածանքով ձերբակալվել է ոստիկանության Կենտրոնական բաժին է Տեղափոխվել Երևանի բնակիչ 27-ամյա Գուրգեն Արսենյանը: Նրա մոտ հայտնաբերվել է 2 հաս կազմի և 16.5 սմ շեղքի երկարությամբ դանակ:



Նախաձեռնվել էր քրեական վարույթ: ArmLur.am-ը փորձեց հետաքրքրվել, թե ինչ ընթացք ստացավ այս գործը: Ի պատասխան՝ քննչական կոմիտեից հայտնեցին. «2022 թվականի դեկտեմբերի 27-ին Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ծառայողները Երևան քաղաքի Մաշտոցի պողոտա-Բյուզանդ փողոցների խաչմերուկի մոտից սառը զենք կրելու կասկածանքով ձերբակալել է բաժին են տեղափոխել Գ. Արսենյանին, ում մոտից անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է երկու հատ կազմի և մեկ 16.5 սմ շեղքի երկարությամբ դանակ:

Դեպքի առթիվ նույն օրը ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն է Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Գ. Արսենյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերված թվով 1 հատ դանակի և թվով երկու հատ կազմիների՝ սառը զենք հանդիսանալու հանգամանքը պարզելու համար նշանակվել է քրեագիտական փորձաքննություն: Համաձայն փորձագետի եզրակացության՝ փորձաքննությանը ներկայացված կազմիներից մեկը պատրաստված է գործա-

րանային, մյուսը՝ արհեստագործական եղանակով, դրանք ունեն տնտեսական ցողային նշանակություն և սառը զենք չեն հանդիսանում: Դանակը պատրաստված է գործարանային եղանակով, հանդիսանում է խոհանոցային դանակ, սառը զենք չի հանդիսանում:

Հաշվի առնելով, որ Գ. Արսենյանի արաքում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները՝ կայացվել է քրեական վարույթը կարճելու որոշում:

ՔՍԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՔ ԱՆՉ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում իրականացված քննչական և վարույթային գործողությունների արդյունքում պարզվել են 3 անձի կողմից ոստիկանության աշխատակցի ծառայողական գործունեությանը միջամտելու դեպքի մի շարք հանգամանքներ:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ 2023 թվականի հունվարի 31-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Տաշիրի բաժնի վարչական շենքի պարտկային ծառայության համար նախատեսված աշխատասենյակում Տաշիր քաղաքի 31 և 33-ամյա և Սարատովյա բնակավայրի 28-ամյա բնակիչները, գտնվելով ոչ սթափ վիճակում, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարտկային ծառայության կրտսեր պարտկի կողմից իրենց ընկերոջը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելու վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն կազմելուն խոչընդոտելու նպատակով սկսել են վիճաբանել հիշյալ պարտկի և վիճաբանությանը միջամտող մեկ այլ պարտկի հետ:

Վերջիններիս հասցեին նրանք հնչեցրել են հայհոյանքներ, այնուհետև բռնություն գործադրելով՝ ձեռքերով ու ոտքերով բազմաթիվ հարվածներ հասցրել նրանց մարմնի տարբեր հատվածներին:

Հարուցված հանրային քրեական հետապնդման հիման վրա՝ վարույթն իրականացնող քննիչի կողմից հիշյալ երեք տղամարդկանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: Նախաքննությունը շարունակվում է:

ԽՄԲԻ ԱՆՂԱՄՆԵՐԸ ՉԵՐԲԱԿԱԿՎԵԼ ԵՆ

Հունվարի 31-ի գիշերն էր, ժամը 3:35-ը, երբ հսկող սարքերը մայրաքաղաքի Անդրանիկի փողոցում ֆիքսեցին տարրիչ-նակ շարժ: Դիմակավորված չորս հոգի տեխնիկական միջոցների գործարանում փորձում են բանկոմատից գողություն անել: Գործի կեսն արել էին, մտնում էր պայթեցնելը, երբ բանկոմատի ծառայություն կատարող ոստիկանը ձայներ լսեց: Բանկոմատի ոստիկանության պետական պահպանության զինավոր վարչության հսկողության տակ էր:

Հերթապահող ոստիկանը միջամտեց, և գողության եկած տղամարդիկ, գործն ու գործիքները թողած, փախան: Ահագանգով դեպքի վայր մեկնեցին ոստիկանության Երևան քաղաքի վարչության, Մալաթիայի բաժնի օպերատիվ խմբեր,

փորձագետ ու քննիչ: Նախաձեռնվեց քրեական վարույթ, իրավապահներն անցան գործի՝ տարածքի զննություն, վարկածների վերլուծություն և, հիարկե, օպերատիվ աշխատանք:

Օրեր տեսած օպերատիվ-հետախուզական համագործակցված աշխատանքի արդյունքը տեսանելի դարձավ փետրվարի 4-ին: Իրավապահներին հայտնի դարձավ, որ խմբի անդամները ցանկանում են լքել հանրապետության սահմանները և գտնվում են Ստեփանավանում: Երեկոյան ժամը 21:30-ին, ինչպես ասում են, արդեն ճամպուկները հավաքած, Ստեփանավանում ձերբակալվեցին և, նրանցից մեկի «Հոնդա» մակնիշի մեքենայով հանդերձ, տեղափոխվեցին ոստիկանության Մալաթիայի բաժնի, ապա ներկայացվեցին տարածքային քննչական բաժնի: Փետրվարի 6-ին դատարանի որոշմամբ իրավապահները խուզարկել են նրանց մեքենան՝ հայտնաբերելով գործարանային համարով «ԳԼՈՔ» ատրճանակ՝ լիցքավորված 9 փամփուշտով:

Բազմիցս տեղեկացրել ենք, որ բանկոմատների մեջ տեղադրված է հատուկ սարքավորում, և բանկոմատի վրա տեխնիկական ներգործության դեպքում թափաղամների վրա ներկայություն է լցվում դրանք դարձնելով ոչ պիտանի: Եվ նույնիսկ գողությունը հաջողությամբ ավարտին հասցնելու պարագայում կանխիկ գումարը կդառնա անպիտան:

ԼՈՒՐԵՐ

ԲԱԽՉԻՅԱՆՆ ԱՆՄԵՂ Է

Վերաքննիչ քրեական դատարանն անփոփոխ է թողել 2022 թվականի սեպտեմբերի 28-ի Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավճիռը, որով ճանաչվել է հռչակվել էր դատավոր Բորիս Բախչիյանի անմեղությունը: Հիշեցնենք, որ դատավոր Բորիս Բախչիյանին մեղադրանք էր առաջադրվել իր վարույթում քննվող գործերից մեկով ամբաստանյալին իբրև ակնհայտ ապօրինի կալանավորելու համար, և դատավորը հիշյալ մեղադրանքով տեական ժամանակ գտնվել էր անազատության մեջ:

ՔՍԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն Ապարանի կրակոցների գործով մեղադրյալներից Անդրանիկ Ավագյանի նկատմամբ քրեական հետապնդումը կասեցրել է, քանի որ իրավապահ համակարգը չգիտի նրա գտնվելու վայրը:

Աժ ԶԴ-ական պատգամավոր Մաթեոս Ասատրյանի եղբորը՝ Գրգոր Ասատրյանին, ՀՀ քննչական կոմիտեն հարցաքննել էր:

Հիշեցնենք, որ 2022թ. հունիսի 18-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Երևան քաղաքի 32-ամյա բնակիչը եղբոր հետ Ապարան քաղաքում ավտոմեքենան վարելու ընթացքում ձայնային ազդանշան են տվել «Ինֆինիտի» մակնիշի ավտոմեքենային, շրջանցել և կանգնեցրել այն, այնուհետև մոտեցել են վարորդին և մեքենան վարելու հարցի շուրջ զրուցել նրա հետ, ինչին միջամտել են Ապարան քաղաքի մի խումբ բնակիչներ: Խոսակցությունը վերածվել է վիճաբանության, որը շարունակվել է Ապարան քաղաքի սկզբնամասում: Նշված խոսակցությունը շարունակելու նպատակով հաջորդ օրը՝ հունիսի 19-ին, 32-ամյա տղամարդը, նրա եղբայրը մի քանի անձանց հետ գնացել են Ապարան քաղաքում գտնվող գազալցակայանի տարածք, հանդիպել նախորդ օրը իրենց խոսակցությանը միջամտած անձանցից մեկին և ձեռք են թափարկել վերջինիս: Նույն հարցի շուրջ խոսակցությունը ժամը 19:30-ի սահմաններում շարունակվել է Նիգավան գյուղի աղբանոցին հարակից տարածքում, որի ընթացքում 32-ամյա տղամարդն իր մոտ գտնվող հրացանից կրակոցներ է արձակել իրենց հետ վիճաբանող անձանց ուղղությամբ: Հրազենային վնասվածքներով Ապարանի բժշկական կենտրոն տեղափոխված երկու անձ՝ Ապարան քաղաքի 27-ամյա բնակիչներ, հիվանդանոցում մահացել են, իսկ 5 անձ տեղափոխվել է բժշկական կենտրոններ:

32-ամյա տղամարդը կալանավորված է:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 66 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՎԱՔՆԵՐԻՆ ԳԺԿԱՍՈՒԹՅԱՄԲ ԵՆ ՄԱՍՆԱԿՅՈՒՄ

Այս տարվա մարտի 1-ից մինչև մայիսի 12-ը կանցկացվեն պահեստազորայինների վարժական հավաքներ: Այդ վարժական հավաքներին կմասնակցեն 20-55 տարեկան պահեստազորայինները: Վարժանքները կլինեն 25 օրով: Տավուշի մարզի համայնքապետարանների համապատասխան աշխատակիցները զանգահարում են իրենց համայնքների բնակիչներին, ճշտում նրանց գտնվելու վայրը, որպեսզի նրանց անունով ծանուցագրեր ուղարկվեն, նրանք մասնակից դառնան վարժական հավաքներին: Սահմանափակ մարզի բնակիչները դժվարությամբ են ընդունում այն լուրը, որ իրենք մասնակցելու են վարժական հավաքներին: Նրանք, այնքան անհանգիստ են, որ 2020 թ.-ի պատերազմի, 2022թ. սեպտեմբերի 13-14-ի մարտական գործողությունների հետեանքները, վստահություն չեն տածում Նիկոլ Փաշինյանի, ՀՀ պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի նկատմամբ:

ՈՒՂՂԵՑ ԻՐ ՄԻՍԱԸ

Փետրվարի 1-ից Տավուշի մարզապետարանի ինտերնետային կայքում հայտարարություն է տեղադրված փետրվարի 7-ին նշանակված Տավուշի մարզխորհրդի նիստի մասին: Այդ նիստի օրակարգի 4-րդ կետը ձևակերպված էր այսպես. «2022 թվականի ձմեռային զորակոչի արդյունքների և 2023 թվականի գարնանային զորահավաքի նախապատրաստական աշխատանքների մասին»: Այս ձեռնարկում Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի և մարզպետարանի աշխատակազմի անփութության հետեանք է. մասնակի կամ ընդհանուր զորահավաք կատարում են պատերազմական իրավիճակի ժամանակ: Փետրվարի 6-ին մարզպետը կամ մարզպետարանի աշխատողները, գիտակցելով իրենց կատարած սխալը, մարզպետարանի ինտերնետային կայքում գետնելված հայտարարության մեջ ուղղում են կատարել՝ վերաձևակերպելով մարզխորհրդի նիստի օրակարգի 4-րդ հարցը: Այն վերաշարադրված է հետևյալ կերպ. «2022 թվականի ձմեռային զորակոչի արդյունքների և 2023 թվականի գարնան վարժական հավաքների նախապատրաստական աշխատանքների մասին»: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քակոր, Նիկոլ Փաշինյանի որդեմանը 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը հասկացել է, որ զորահավաքն ու վարժական հավաքները շատ տարբեր բաներ են:

ՈՒՌՃԱՑԱԾ ՀԱՍՏԻՔՆԵՐ

Ընդամենը 2 ոլորտ՝ մարզի հանրակրթական դպրոցները և առողջապահական հիմնարկները անմիջականորեն ղեկավարող Տավուշի մարզպետարանն ունի 75 աշխատող: Մարզպետարանի հաստիքացուցակում կան թափուր հաստիքներ, որոնք տարիներ շարունակ չեն զբաղեցվում: Թափուր են Տավուշի մարզպետի օգնականի, մարզպետի 2 խորհրդակցականների, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի, այդ վարչության մասնագետի, քաղաքաշինության վարչության պետի, բնապահպանության բաժնի վարիչի, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության ավագ մասնագետի, տեղական ինքնակառավարման և ՀԳՄ հարցերով վարչության պետի տեղակալի, քարտուղարության ավագ մասնագետի հաստիքները: **ՈՍԿԱՆ ՍՈՐՈՒՅՈՒՄ Տավուշ**

ՆԱԽԱԳԻԾ

ԿԱՏԵՂԾՎԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային ֆինանսման և ներկայացրել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծի և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի փաթեթը:

Նախագծերի նպատակը բարձրագույն կրթության և գիտության բնագավառների մեկ միասնական քաղաքականության իրականացումն է, այդ բնագավառները կարգավորող իրավական դաշտի կատարելագործումն ու բնագավառների պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումը:

Նախագծերով հստակեցվում են բարձրագույն կրթության և գիտության ոլորտների քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմինների լիազորությունները: Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է պետական կառավարման համակարգում ունենալ նոր մարմին՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, որը գործելու է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ և իրականացնելու է բարձրագույն կրթության և գիտության ոլորտի միասնական քաղաքականությունը: Մարմնի գործունեության ոլորտին են վերապահվելու ՀՀ ԿԳՄՍՆ ենթակայության Գիտության կոմիտեի և Բարձրագույն որակավորման կոմիտեի, ինչպես նաև Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության գործառնություններ՝ ապահովելով երկու ոլորտների համագործակցությանը և ինտեգրմանն ուղղված պետական քաղաքականության իրականացումը:

Հիշեցնենք, որ ներկայում շրջանառության մեջ է գտնվում «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագիծը, որը կոչված է գիտության և բարձրագույն կրթության բնագավառներում պետական միասնական քաղաքականության ապահովմանը, և վերջինիս իրականացման համար ես անհրաժեշտ է միասնական ինստիտուցիոնալ համակարգ: Սրան զուգահեռ՝ գիտական աստի-

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԵՆԱՐԿՈՒՄ
ԿԱՏԵՂԾՎԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԻԾ

ճանաչողի մասնակարգում պետական քաղաքականությունը միտված է աստիճանաչողի մասնակարգ տեղափոխմանը, ինչի արդյունքում փոփոխվելու են աստիճանաչողի մասնակարգերը, և նվազեցվելու է գործընթացում պետության ներգրավվածության աստիճանը:

Վերոնշյալ գործառնությունները նոր ձեռավորվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին փոխանցված պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքներում:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի լրամշակված նախագծով նաև առաջարկվում է ներմուծել կամ հստակեցնել մի շարք հասկացություններ, մասնավորապես՝ առաջարկվում է լրացնել «ճարտարագիտատեխնիկական աշխատող», «գիտամասնակարգական (գիտակրթական) աշխատող», «գիտական դրամաշնորհ» և «գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ» հիմնական հասկացությունները: Ոլորտի ֆինանսավորման «պայմանագրային (թեմատիկ)» ձևի անվանումն առաջարկվում է փոխել

«գիտական դրամաշնորհային» ձեռակերպմամբ՝ այն համապատասխանեցնելով ֆինանսավորման նոր ձեռին: Նոր նախագծով նաև կանոնակարգվում է գիտական աշխատողի աշխատանքի վարձատրության և թոշակավորման, գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարի տրամադրման ընթացակարգը: Այսպիսով, պետական բյուջեի հաշվին գիտական աստիճանի համար հավելավճար նախատեսվում է տրամադրել միայն պետական ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված և աշխատանքի լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատող գիտական աշխատողներին, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա ոլորտում հիմնական աշխատանքի անցնելու/մնալու համար: Իսկ 70 տարին լրացած և պետական գիտական ու գիտատեխնիկական ծրագրերում չընդգրկված գիտական և գիտատեխնիկական գործունեության առնվազն 30 տարվա ստաժ ու գիտական աստիճան ունեցող և վերջին 10 տարում առնվազն ութ տարի գիտական աստիճանի համար հավելավճար ստացած անձանց նախատեսվում է կենսաթոշակից բացի տրամադրել ամենամսյա հավելավճար՝ գիտական աստիճանի համար տրվող ամենամսյա հավելավճարների չափով:

Փոփոխությունների նպատակը որոշակի սոցիալական երաշխիքների և հիմքերի ստեղծումն է՝ ոլորտում սերնդափոխության իրականացման համար: Նախագծով նախատեսվում է գիտական դրամաշնորհային ծրագրերի շրջանակում արտերկրի կենտրոններում մեկ ամսից ավելի տեղափոխված մասնագիտական վերապատրաստման ընթացքում ֆինանսավորումը կազմակերպել միջազգային շարժունության ծրագրերի նմանությամբ՝ ֆինանսական աջակցությամբ (scholarship): Նախագծով նաև լրամշակվում է ՀՀ գիտությունների գագաթին ակադեմիային վերաբերող հոդվածը:

Անկախված է, որ նախագծերի ընդունումը հնարավոր կդարձնի ոլորտները կանոնակարգող իրավական ակտերի համապատասխանեցումը բարձրագույն կրթության և գիտության զարգացման արդի վիճակին և միջազգային չափանիշներին, կնպաստի ոլորտների առաջընթացին և դիմամիկ զարգացմանը:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՃԱՆԻ ԳԻՎՈՂ ԱՆՈՒՆՆԵՐ

Մեր հանրապետությունում վերջին տարիներին նորածիններին հաճախ տրվող անուններն են Դավիթն ու Նարեն: ?ետաքրքիր փոփոխություններ են տեղի ունեցել նորածիններին հաճախ տրվող անունների ցանկում: Մեզ հայտնի դարձավ, որ ցանկում հայտնվել են Սյունե, Ամելի անունները:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախորդ տարի հանրապետությունում ծնվել է 17 հազար 158 աղջիկ, ինչը 408-ով պակաս է 2021 թվականի համեմատ: Փոխարենն ավելացել է լույս աշխարհ եկած տղաների թիվը: Նախորդ տարվա ընթացքում ծնվել է 19 հազար 195 տղա, 2021 թվականի հետ համեմատ՝ 138-ով ավելի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ 2022 թվականին 1257 տղայի անվանել են Դավիթ, 711 աղջկա՝ Նարե: Ցանկի երկրորդ տե-

ղում Նարեկ անունն է: Նախորդ տարի Նարեկ անուն տվել են 957 տղաների, իսկ, ահա, աղջիկների համար անունների ցանկի երկրորդ տեղում Արփին է, ինչպես անվանել են 540 աղջիկների: Արփինի հաջորդում է Մարիան, Մանեն, Լյուսին, Մարին, Անահիտը, Անգելինան: Նշենք, որ անունների ցանկի 8-րդ տեղում Մարիամ անունն է, որով անվանել են 343 աղջիկների: Ցանկի 10-րդ հորիզոնականում էլ անունն է, որը տրվել է 324 աղջիկների: Եվային հաջորդում են Աննա, Անի, Լուսե, Նանե, Միլենա, Էվա, Սոֆի անունները: Ի դեպ, նախորդ տարի ցանկում հայտնվել է Սյունե անունը: Այն, ի դեպ, առավել տարածված է Վայոց ձորի, Սյունիքի մարզերում: Անցյալ տարվա ընթացքում Սյունե անվանել են 90 աղջկա, Ամելի՝ 191: Տղաների անունների ցանկի երրորդ տեղում Հայկ անունն է (611), չորրորդում Մոնթեն է (577), հինգերորդում՝ Տիգրանը (546): Տղաների անունների թոփ տասնյակում են հայտնվել նաև Արեգ, Մարկ, Միքայել,

Դանիել, Ալեքս անունները: Ի դեպ, ցանկի 11-րդ տեղում Լեո անունն է, որով անվանել են 384 տղաների:

ՍՅՈՒՆԷ ՀԱՍՏԱՐՈՇՈՒՄՅԱՆ

ՄԵՆԹՈՐ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 3-ի N 09-Լ հրամանով հաստատվել է մենթոր դպրոցների ցանկը: Մենթոր դպրոցները ՀՀ դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում 2023 թվականին հանրակրթության պետական չափորոշիչ ներդրման նպատակով իրականացնելու են վերապատրաստումներ:

Ընտրվել է Երեւանի եւ ՀՀ բոլոր մարզերի (բացի Տավուշի) 38 դպրոց:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 12-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«ՆՐԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԸ»

ԲՈՒԺԱՆԻՄԱՏՈՂՆԵՐԸ՝ ԱՐՅԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ «Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» ծրագրի արձանագրությունն ու հետազոտողներին «Նրանց ժամանակը. բուժախաստղերը արցախյան դաժնահարմանը. 1991-1994» աշխատությունը: Գրքի ստեղծման գաղափարի հեղինակը և կազմողը Ռուզաննա Բազրասունյանն է: 1991-1994 թթ. ռազմաճակատի առաջին գծում, ռազմադաշտային բաժանման և մշակման հաստիքներում վիրավոր զինվորներին բուժօգնություն ցուցաբերած բժիշկների, բուժուհիների, բուժակների դասնությունները յուրօրինակ առեւտում են դասերազմի հետ. դասերազմ մարդկային դեմքով, մարդկային արժեքով, առանց գունազարդումների, անկեղծ, դարձ, երբեմն էլ իրենց կասարածը թերազմահաստեղծով «բժեկի հերոսությունը զինվորի կյանքը փրկելն է» ասելով: Նրանք փրկել են շատ կյանքեր: Բացառադեպ անձնական դասնությունների, հուշերի վրա հիմնված «Նրանց ժամանակը» ժողովածուն ինքնին սարեգրություն է, համուն Արցախի ազատագրման մղված դարձարի առարկայացումն ու փաստավավերագրությունը: Այլ ժողովուրդների դասերազմների հետ արցախյան անհամեմատելի է, ամեն երկիր իր դասերազմ ունի՝ իր առանձնահատկություններով: Ռազմական բուժառայություն, որդես այդդիսին, չկար, կանոնավոր բանակ էլ չկար: Ազատամարտիկների ջոկատներն էին ճակատի սարքեր հավաքումներում մարտեր մղում: Բանակի ձևավորմանը զուգահեռ՝ բուժառայությունն էլ ռազմաբժեկության կազմակերպչների շնորհիվ կանոնակարգվեց, համընթաց գործեց (հասկալիս Շուշիի ազատագրումից հետո):



Կատարությունը պատմում են տարբեր մարդիկ: Այսպես է ստեղծվում պատմական դեպքերի ժամանակագրությունը: Ըստ էության, ոչնչից ստեղծվել է ռազմական բժշկություն, և միայն պատերազմից հետո այդ ոլորտն առանձնացվել ու զարգացել է որպես ռազմական գործից անբաժան կառույց: Այդ համատեքստում անգնահատելի է արցախյան բժիշկ Կալեդի Մարությանի ներդրումը, որի շնորհիվ էլ, փաստորեն, ստեղծվել են առաջին հոսպիտալներն ու դրվել ռազմական բժշկության հիմքը: Բժիշկ Մարությանի և իր թիմի շնորհիվ արցախյան պատերազմի տարիներին դաշտային հոսպիտալներում կատարվել է ավելի քան 11 հազար վիրահատություն, 8 հազար զինվոր վերադարձել է ռազմի դաշտ:

Ամենադժվար ու պատասխանատու գործն անում էին նրանք, ովքեր վիրավորին մարտի դաշտից հանում ու առաջին անհրաժեշտության օգնություն էին ցույց տալիս՝ ցավազրկող ներարկում, վիրակապում. այդպես էլ վիրավորի ապրելու շանսերը մեծանում էին: Շատ պատասխանատու ու դժվար աշխատանք էր նաեւ վիրավորների տեսակալորումը՝ հոգեբանորեն անասելի ծանր գործ՝ տվյալ բուժաշխատողի համար. զինվորական բժշկության սահմանված կանոններից է նախ բուժօգնություն ցուցաբերել այն վիրավոր զինվորին, որի ապրելու հնարավորությունն անհամեմատ ավելի մեծ է: Հատկանշական է, որ պատերազմի ամբողջ ընթացքում կրկնվող բոլոր ջնկատներն իրենց կցված բուժանձնակազմն ունեին: Նրանք տեղաշարժվում էին նաեւ բժշկական սարքավորումներով, բուժօգնության պարագաներով, դեղորայքով զինված մեքենաներով: Վիրավորներին տեղում անհրաժեշտ առաջին բուժօգնություն էր ցուցաբերվում, հետո նրանք արագ տեղափոխվում էին դաշտային հոսպիտալներ կամ Ստեփանակերտ, Երեւան: Շարժական հոսպիտալները մարտի դաշտից ամենաշատը 1 կմ էին հեռու. աշխատում էին կրակահերթերի տակ: Ժողովածուն ընթերցողները կկարդան բազմաթիվ պատմություններ այն մասին, թե ինչպես են մեր բուժաշխատողները վիրահատել, բուժել, խնամել եւ, ամենակարեւորը, մարդկային վերաբերմունք ցուցաբերել եւ՝ վիրավոր ադրբեջանցի զերիններին, եւ՝ ադրբեջանցի կանանց, երեխաներին, ծերերին: Շատ են նման պատմությունները՝ հուզիչ ու մարդկային: Հայ բուժաշխատողները՝ բժիշկ, բուժակ, թե բուժքույր, առաջնորդվել են բացառապես Հիպոկրատի երդումով: Երբեք տասնամյակների հեռուներից արցախյան առաջին պատերազմում բուժօգնություն ցույց տված բժիշկներին, բուժքույրերին, բուժակներին գտնելը դյուրին չէր: Նրանց մի մասն այսօր ապրում է Արցախից ու Հայաստանից դուրս, իսկ մի մասն էլ կամ գոհվել է պատերազմի տարիներին, կամ մահացել է պատերազմից հետո: Բուժաշխատողների նախնական ցուցակը տրամադրել է Ստեփանակերտի կենտրոնական զինվորական հոսպիտալի վիրաբույժ, ռազմական բժիշկ, գնդապետ Սամվել Գեւորգյանը, սակայն գրքում գետնոված 116 բուժաշխատողների ցանկը համալրվել է պատմությունից պատմություն, գրույցից գրույց: Կան անուններ, որոնց գտնել չի հաջողվել. նրանց հետքերը, այսպես ասած, կորել են, որոշները տարբեր պատճառներով խուսափել են հարցազրույցից, մի մասն էլ արդեն ողջ չէ: Յուրաքանչյուր բուժաշխատողի պատմությանը կից գետնոված են նրա կենսագրական տվյալները, որոնք ավելի շատ խորհրդանշական են, քան հանրագիտարանային: Հրատարակության հիմնական նպատակն էր գտնել բոլոր այն նվիրյալ բուժաշխատողներին, որոնք շարունակաբար (ամիսներ, տարիներ) եղել են ռազմադաշտի առաջին գծում, դաշտային հոսպիտալներում, գնահատել եւ արժեքորել նրանց հերոսական աշխատանքը: Ամեն մի զինվորի կյանքի համար պայքարած նվիրյալ հերոսներին ժողովուրդը չի ճանաչում, միջոցառում պատերազմի տարիներին, ինչպես զինվորներն են ասում, «վերեւ՝ Աստված, ներքեւ՝ բժիշկը»: Օրեր շարունակ վիրահատարանից դուրս չեկած բուժաշխատողները տեսել են պատերազմի ամբողջ սարսափն իրենց ձեռքերի մեջ: Պատերազմից հետո նրանք ընդհանրապես մոռացության մատնվեցին՝ երբեմն չարժանանալով պարզ շնորհակալության: Շատերի անունները չենք գտնի գրքերում ու հանրագիտարաններում, բայց նրանք դեռ սպասում են, որ մի օր կգա իրենց ժամանակը:

Այս կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ «Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» ծրագրի արձանագրությունն ու հետազոտողներին «Նրանց ժամանակը. բուժախաստղերը արցախյան դաժնահարմանը. 1991-1994» աշխատությունը: Գրքի ստեղծման գաղափարի հեղինակը և կազմողը Ռուզաննա Բազրասունյանն է: 1991-1994 թթ. ռազմաճակատի առաջին գծում, ռազմադաշտային բաժանման և մշակման հաստիքներում վիրավոր զինվորներին բուժօգնություն ցուցաբերած բժիշկների, բուժուհիների, բուժակների դասնությունները յուրօրինակ առեւտում են դասերազմի հետ. դասերազմ մարդկային դեմքով, մարդկային արժեքով, առանց գունազարդումների, անկեղծ, դարձ, երբեմն էլ իրենց կասարածը թերազմահաստեղծով «բժեկի հերոսությունը զինվորի կյանքը փրկելն է» ասելով: Նրանք փրկել են շատ կյանքեր: Բացառադեպ անձնական դասնությունների, հուշերի վրա հիմնված «Նրանց ժամանակը» ժողովածուն ինքնին սարեգրություն է, համուն Արցախի ազատագրման մղված դարձարի առարկայացումն ու փաստավավերագրությունը: Այլ ժողովուրդների դասերազմների հետ արցախյան անհամեմատելի է, ամեն երկիր իր դասերազմ ունի՝ իր առանձնահատկություններով: Ռազմական բուժառայություն, որդես այդդիսին, չկար, կանոնավոր բանակ էլ չկար: Ազատամարտիկների ջոկատներն էին ճակատի սարքեր հավաքումներում մարտեր մղում: Բանակի ձևավորմանը զուգահեռ՝ բուժառայությունն էլ ռազմաբժեկության կազմակերպչների շնորհիվ կանոնակարգվեց, համընթաց գործեց (հասկալիս Շուշիի ազատագրումից հետո):

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ

Վերջին տարիներին ՀՀ պարտատոմսերի շուկան կայուն աճ է ապահովում, այդ թվում՝ բանկերի կողմից թողարկումների ակտիվացման շնորհիվ: Չնայած դրան՝ շատերի համար պարտատոմսերն առ այսօր «չտեսնված գազան են», որը չգիտեն՝ ինչի հետ ուտել ու ոնց մարտն: Այսօր պարտատոմսերի մասին կխոսենք բոլորին հասկանալի լեզվով:

ԻՆՉ Է ԿԱՐՏԱՏՈՄՈՒՆ
Պարտատոմսը խնայողության եղանակ է, արժեթուղթ, որը ձեռք բերելով՝ պայմանականորեն ասած, գնորդը փոխառություն է տալիս այն թողարկողին՝ պետությանը, բանկին...

Պարտատոմսերի ձեռք բերման համար ծախսված գումարը՝ մայր գումարը, գնորդը հետ է ստանում դրանց շրջանառման ժամկետի ավարտին, իսկ կուտակված տոկոսագումարը՝ արժեկտրոնը, նրան վճարվում է որոշակի պարբերականությամբ, օրինակ՝ «Կոնվերս Բանկ»-ը դրանք Ձեր հաշվեհամարին է փոխանցում կիսամյակային կտրվածքով:

ԻՆՉՐԻ ՉԵՆ ԿԱՐՏԱՏՈՄՈՒՆ
Պարտատոմս կարելի է եւ պետք է գնել մի քանի պատճառով.

-Դրանք հավասարեցված են ավանդին, իսկ ներդրումները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

-Պարտատոմսերի տոկոսադրույքը գրավիչ է, իսկ եկամուտը չի հարկվում: Օրինակ՝ «Կոնվերս Բանկ»-ի կողմից ներկայում տեղաբաշխվող դրամային պարտատոմսերի եկամտաբերությունը չհարկվող 10.5% է, իսկ դրամային պարտատոմսերինը՝ 3.75%:

-Պարտատոմսերը խնայողությունները դիվերսիֆիկացնելու հիմնալի գործիք են:

ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄԸ ԿԱՐԵՆՈՐ Է

Խնայողությունների դիվերսիֆիկացումը եւ պարտատոմսերում ներդրումը օգնում է զսպել եկամտի կորստի պոտենցիալ ռիսկը՝ ապահովելով կայուն ֆինանսական հոսքեր:

Միասնական տեսակետ չկա, թե որքան պիտի լինի խնայողությունների մասնաբաժինը: Մեզանում ամենակիրառելի ամերիկյան CNBC հեռուստաընկերության Mad Money հարդրաշարի վարող, հեջ ֆոնդերի նախկին կառավարիչ Ջիմ Քրամերի տեսակետն է, ըստ որի՝ 40-50 տարեկանում դրա մասնաբաժինը պիտի 20%-30% լինի, իսկ 50-60-ում՝ 30%- 40%:

Փորձեք հետևել խորհրդին, սկսեք փոքր գումարից: Ներդրման առավելությունները կզգաք մի քանի ամիս հետո՝ ստանալով առաջին եկամուտը: Ի դեպ, անկախ նրանից, թե տեղաբաշխման մեկնարկից հետո որ օրն է գնվել պարտատոմսը, եկամուտը բոլոր գնորդներին վճարվում է նույն ժամանակահատվածում:

Այնպես որ, գնելով տարբեր թողարկումների պարտատոմսեր՝ Դուք կկարողանաք կառավարել Ձեր հաշվին մուտքերը՝ մեկից եկամուտ ստանալ մայիսին, մյուսից՝ փետրվարին...

ԻՆՉՎԵՆ ԳՆԵՎ ԿԱՐՏԱՏՈՄՈՒՆ

Պարտատոմս գնելու երկու տարբերակ կա. -Եթե «Կոնվերս Բանկ»-ի հաճախորդ եք, սպա մուտք եք գործում միայն հավելված, սեղմում «+» նշանի վրա եւ ընտրում «Գնել պարտատոմս»: Պայմանագիրը ստանում եք բանկում նշված էլ. հասցեին:

-Եթե հաճախորդ չեք, կարող եք գործարքը կատարել բանկի՝ Ձեզ ամենամոտ մասնաճյուղում:

Թողարկման եւ տեղաբաշխման մանրամասներին, ծրագրային ազդագրի եւ թողարկման վերջնական պայմաններին կարելի է ծանոթանալ պաշտոնական կայքէջից: Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ԲԱՐԲԱՌԸ ՄԵՐ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է»

Փետրվարի 21-ը նվիրվում է որդես Մայրենի լեզվի միջազգային օր:

Այս կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Լեզվի կոմիտեի հետ համատեղ, անցկացնում է աշակերտների հեղինակային տեսանյութերի մրցույթ՝ «Բարբառը մեր հայրտությունն է» խորագրով: Համաձայն մրցույթային կանոնների՝ յուրաքանչյուր դպրոց կարող է ներկայացնել մինչեւ 1 թրայե տեսողությամբ մեկ տեսանյութ, որում հայերենի որդես բարբառով կներկայացվի մայրենի լեզվին նվիրված բեմականացում կամ ազատ ոճի այլ մտահղացում: Դպրոցները պետք է դրանք հրատարակեն իրենց սոցիալական հարթակներում #խոսումենքբարբառով նշանով՝ նշելով ԿԳՄՍ նախարարության էջը: Մրցույթին մասնակցել ցանկացողներն իրենց տեսանյութերի հղումները պետք է ուղարկեն մինչեւ 2023 թ. փետրվարի 14-ը ներառյալ mayreni@escs.am էլ. փոստին:

Վերոնշյալ չափանիշներին չհամապատասխանող տեսանյութերը չեն դիտարկվի: Լավագույնները կիրապարակվեն նախարարության սոցիալական հարթակներում: Մայրենիի միջազգային օրվա շրջանակում դպրոցներին առաջարկվում է նաեւ, որպես սոցիալական արձակ, իրականացնել ուսումնական նախագծեր՝ նվիրված մայրենի լեզվին, փետրվարի 14-21-ը դրանք հրատարակել դպրոցների պաշտոնական հարթակներում («Ֆեսթիվը», «Ինստագրամ»)՝ #մերմայրենի #մայրենիամենուր նշաններով՝ նշելով ԿԳՄՍ նախարարության էջը: Նախատեսվում է ԿԳՄՍ-ի սոցիալական հարթակներում Մայրենիի նախընթաց շաբաթվա ընթացքում իրականացնել նաեւ մեկ այլ սոցիալական արձակ՝ հրատարակել օտար բառեր եւ դրանց համարժեք հայերեն տարբերակները՝ օգտագործելով #եսընտրումեմայրենի նշանով: Դպրոցները եւ կարող են միանալ այս նախաձեռնությանն իրենց սոցիալական էջերում:

Հայերենի համարժեքներին կարելի է ծանոթանալ Լեզվի կոմիտեի կայքի «Հորդորակ» շարքում: Նշենք, որ, համաձայն ընթացակարգի, մրցույթի եւ արձակի վերաբերյալ շրջաբերական գրությամբ տեղեկացվել են նաեւ ՀՀ դպրոցները:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Երեւանի Միսիթար Հեռացու անվան պետական բժշկական համալսարանի ստոմատոլոգիական ֆակուլտետի թերապեւտիկ ստոմատոլոգիայի բաժնի ուսանողուհի Զվարթինե Անդրանիկի Միդոլայնի մագիստրատուրայի՝ 2012 թվականի ավարտական դիպլոմը (AA006125, գրանցման համար 426):

Խնդրում ենք գտնելու կամ տեղեկություն ունենալու դեպքում զանգահարել +374 55021313 հեռախոսահամարով (Զվարթինե):

● Փետրվարի 9-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Fe Show» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 8000-12000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



Էջը՝ ՈՌՋԱ ՊՈՐՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ անել եւ ու՞մ դիմել, երբ գործատուն դահանջում է թեսավորվել, բայց չի փոխհատուցում դրա գումարը:
Հայկուհի Բաղդասարյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Եթե Ձեր հաշվին թեստավորվելու գործատուի պահանջի չկատարման պայմաններում գործատուն արգելում է Ձեզ աշխատանքի ներկայանալ կամ կատարել Ձեր աշխատանքը, ապա այդ դեպքում կարող եք գրավոր դիմում ներկայացնել գործատուին՝ խնդրելով պարզաբանել, թե ինչ պատճառով է պահանջում թեստավորում անցնելը, որ իրավական նորմերով է հիմնավորվում այդ պահանջը, եւ ինչու պետք է այդ թեստավորումն անցնեք Ձեր հաշվին: Ավելին՝ դիմումով կարող եք հայտնել, որ ցանկանում եք կատարել Ձեր աշխատանքը, սակայն գործատուն անհիմն պատճառներով խոչընդոտում է: Եթե Ձեր դիմումին գործատուն հիմնավոր պատասխան չտրամադրի, ապա Դուք կհայտնվեք ոչ Ձեր մեղքով հարկադիր պարապուրդում, իսկ գործատուն պարտավոր կլինի վճարել պարապուրդի ողջ ժամանակահատվածի համար: Վճարումը չկատարելու դեպքում կարող եք բռնագանձել այն դատական կարգով:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՎՈՒՐԳ».

Եթե աշխատողը համաձայն չէ թեստավորում անցնել իր հաշվին, եւ իր առողջության վերաբերյալ առկա չեն համապատասխան փնտախիշներ, ապա աշխատողն իրավունք ունի հրաժարվել գործատուի այդ պահանջը կատարելուց կամ համաձայնի՝ պայմանով, որ թեստավորման ծախսերը պետք է փոխհատուցի գործատուն: ՀՀ աշխատանքային օրենսդրությունը չի սահմանում աշխատողի համար որեւէ պարտականություն այն դեպքերի վերաբերյալ, երբ գործատուն ուղղակի ցանկանում է, որ թեստավորում անցի աշխատողը:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ անել եւ ու՞մ դիմել, եթե ինձ ստիպում են նախընտրական քարոզչություն անել, ցուցակներ կազմել:
Մարիամ Հովհաննիսյան (23 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Նախընտրական քարոզչություն կատարելու հարկադրանքը կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ բռնություն կիրառելով, բռնություն կիրառելու սպառնալիքի ձեւով, գույքը վնասելով, գործատուի կողմից իր աշխատողներին աշխատանքից ազատելու սպառնալիքի ձեւով եւ այլն: Հանցագործությունը կարող է կատարվել ինչպես թեկնածուների, այնպես էլ այլ շահագրգիռ անձանց՝ ներառյալ կուսակցության անդամների կողմից: Առավել խիստ պատասխանատվություն է նախատեսված նախընտրական քարոզչություն կատարելու հարկադրելու այն դեպքերի համար, երբ արարքը կատարվել է գործատուի կողմից իր ենթակաների նկատմամբ կամ պաշտոնատար անձի կողմից իր ենթակայությանը գտնվող անձանց նկատմամբ կամ բռնության կամ դրա սպառնալիքի միջոցով կամ զուգորդվել է անձին ազատությունից զրկելով:

ՀՀ ոստիկանություն

«ԺՈՂՎՈՒՐԳ».

Նախընտրական ժամանակահատվածում կատարվող հանցագործություններից է նախընտրական քարոզչություն կատարելու հարկադրելը: Ընդհանուր բնորոշմամբ, նախընտրական քարոզչություն է համարվում այն գործողությունը, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին քվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



«Փյունիկը» պայմանագիր է կնքել 32-ամյա կոլումբացի պաշտպան Խուան Բրավոյի հետ: Թիմի նորեկը արդեն հասցրել է առաջին գոլը խփել «Փյունիկում»՝ գրավելով ղազախական «Մակտարալի» դարպասը ընկերական խաղում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
 Բաժանորդագրվելու
 համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
 հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
 հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
 հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
 Ազգանուն՝ _____
 Առաքման հասցե՝ _____
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը.
 «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
 տրված է 24.11.2010
 Ստորագրված է տպագրության 7.02.2023
Պատկերը հարցազրույցից է: Վարդան, 4 հունվար 2021

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: